

Ա. Օ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

«ԳԻՐՔ ՎԱՍՏԱԿՈՑԸ» ՄԵՂՎԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոգվածում ներկայացվում են մեղվի խնամքի եղանակները, մեղրի և մոմի բուժական կիրառությունը միջնադարյան ձեռագիր բնագրի հիման վրա:

Մեղվի խնամքի մասին հայ և օտար աղբյուրներում պահպանված հնագույն բնագրերից մեկը «Գիրք Վաստակոցն» է, որը վերագրվում է բանահավաք Անատոլ Պերիտացուն: Սույն բազմաբովանդակ աշխատությունը գրելիս Պերիտացին օգտվել է մինչ այդ հրապարակի վրա եղած հեղինակների գրքերից, որոնց հաճախ վկայակոչում է տարբեր աուիթներով [2, էջ 1]:

Անատոլ Պերիտացու ապրած ժամանակաշրջանի մասին կան տարբեր կարծիքներ: Հավանականը համարվում է IV—VI դդ.: Տարակարծությունն էլ կան նաև նրա անվան ու ազգային պատկանելության շուրջ, որովհետև գրքի սկզբից և վերջից պակասում են բազմաթիվ թերթեր: Գրքից մեղ է հասել միայն 226 էջ: Հայտնի չէ նաև աշխատության ստույգ վերնագիրը, որի պատճառով կոչվել է տարբեր անուններով: Օրինակ՝ Կ. Պոլսում հայերեն հրատարակված նախորդ օրինակը կրել է «Պարտիզպանի գիրք» խորագիրը:

Հռոնարեն այդ գիրքը,— գրում է պրոֆ. Ա. Գ. Արրահամյանը,— գիտությունը հայտնի է եղել դեռ IV դարից, ամփոփված «Գյուղատնտեսական հանրագիտարանի» մեջ: Այն IV դարում հռոնարենից թարգմանվում է ասորերեն, որից էլ IX դարում թարգմանում են արաբերեն: Ահա այս արաբական օրինակից էլ սկիզբ է առնում հայկական «Գիրք Վաստակոցը» [1, էջ 180]:

«Գիրք Վաստակոցի» քառասուներեք գլուխներում խոսվում է մեղվապահության (97—192) մասին, մեղվի խնամքի վերաբերյալ տրվում են բազմաթիվ խորհուրդներ, որոնց մի մասը մինչև այսօր էլ, որոշ փոփոխություններով, օգտագործում են մեղվապահները:

Թարգմանված բնագրում գրքի գլուխները կրում են «Դուռն» խորագիրը: Մեղունների և մեղվապահության մասին տեղեկություններ կան Մ (200), Ղ (90), ՍՂԱ (291), ՍՂԲ (292) «դռներ»-ում:

«Դուռն» ԾՂԳ (193)-ում խորհուրդ է տրվում մեղունների տունը, այսինքն՝ մեղվանոցը, այնպես պատրաստել, որ ձմռանը տաք լինի, իսկ ամռանը՝ զով: Պահանջվում է մեղվանոցը դնել առունների մոտ, որ ջուր կրելու համար մեղուն շատ հեռու չգնա, իսկ եթե շրջակայքում առու չկա, ապա մեղվանոցի մոտ ամաններով ջուր դնել և մեջը քարեր լցնել, որպեսզի մեղուն նստի քարերին և ազատ օգտվի ջրից: Նույն տեղում խորհուրդ է տրվում մեղվանոցի մոտ հաշա (զամբուռ, ավելի խոտ—Ա. Գ.) և գարի ցանել, որովհետև մեղունները այդ բույսերը շատ են սիրում, միևնույն ժամանակ դրանք լավ մեղրատու և մեղվի աճ՝ պարս (ձագ) տվող բույսեր են: Առաջարկվում է նաև մեղվանոցը անաղմուկ, բարձր պարսպով շրջապատված տեղում պատրաստել, որ քամին և մարդիկ չխանգարեն մեղվի աշխատանքին. «Պարտ է գիտել, և

զմեղուաց տունն այնպէս շինել, որ ի գարուն մինչև արևն ցայթէ՝ նա յինքն դիպի զորդ ընդդէմ. և այս վասն այնր է լաւ, որ ի ձմեռն ջերմ լինի և յամառն հով: Եւ իւր ջուրն այն է լաւ, որ առու լինի կարկաչան... Եւ թէ ի գնաց ջուր չլինի, ի ջրհորէ գոնեք դիր, և ծովեր արա, և՞ քանի մօտ լինի՝ այն է լաւ, որ չհալածին, ի հեռուն: Եւ խոտ մի կայ զոր արապերէն հաշա ասեն, որ մեղուն զինքն խիստ սիրէ, և երբ զինքն ուտէ՝ շատ մեղր շինէ, և պարս աղեկ տայ: Պարտ է յառջենին գարի ցանել, զի և զայն ևս սիրէ» [2, էջ 189—190]:

Մեղվանոցում ամաններով ջուր դնելն օգտակար է, որովհետեւ օրվա ընթացքում մեղուն հեռու առավակներից մեղվափեթակ. ջուր վարող է տանել մեկ-երկու անգամ, իսկ ջրամաններից՝ տասնյակ անգամներ: Դեռ ավելին, անհրաժեշտ է, այդ ամանների ջրի մեջ մի քիչ էլ աղ լցնել, որպեսզի մեղուները ոչ մաքուր տեղերի տաք ջրերի շուրջ չհավաքվեն, քանի որ նրանք տաք և աղի ջուր շատ են սիրում: Բայց քոչվոր մեղվանոցներում ջուր դնելը կարող է մեղունների հիվանդության պատճառ դառնալ շրջապատում հիվանդ մեղվանոց լինելու դեպքում:

«Գիրք Վաստակոցում» առաջարկվում է մեղվափեթակները պատրաստել կաղնու կամ փիճի ծառի տախտակից: Խորհուրդ է տրվում արկանոցից բացի, մեղվափեթակի վրա ևս մի քանի մանր անցքեր բացել, որպեսզի օդափոխություն կատարվի և մեղվափեթակի մեջ խոնավության հետևանքով բորբոս և սարգոստայն չառաջանա: Նույն տեղում տրվում է նաև մեղվափեթակների չափսերը. երկարությունը՝ վանգուն ու կես (մոտ 70—90 սմ), լայնությունը՝ երկու թիղ (մոտ 40—45 սմ) [2, էջ 190]:

Գրքում նշվում է, որ մեղվաբնտանիք գնելիս կամ մեղվափեթակներն այլ տեղ փոխադրելիս անհրաժեշտ է տեղափոխման գործողությունը կատարել զրշերը, իսկ մեղվափեթակները լավ ծածկել կամ փաթաթել, որպեսզի մեղուն չվերադառնա մեղվափեթակի նախկին տեղը [2, էջ 190]:

Դեռևս հնագույն դարերում մարդիկ տեղյակ են եղել մեղվի հիվանդությունների ու վնասատուների մասին և յուրաքանչյուր հիվանդության համար օգտագործել են առանձին դեղամիջոցներ: Այսպես՝ եթե մեղուն նստել է թուլավոր խոտի վրա ու հիվանդացել, առաջարկվում է հետևյալ դեղատոմսը: Վերցնել նուրբ կեղև կամ գլթոր, մանր աղալ և բարակ վտավով մաղել, լցնել կավե քրեղանի կամ տաշտի մեջ, վրան ջուր լցնել, խառնել և դնել մեղունների առաջ, որ մեղուն ըմպի այդ ջրից և նրա դաբաղ հիվանդությունը բուժվի: Կամ՝ եթե մեղվի աչքը ցավում է, կորնզան (քարանուխ) պետք է ծխացնել [2, էջ 190—191]:

Մեղվի ոչխիւն ու ցեցը ոչնչացնելու համար առաջարկվում է թզենու ճյուղն ու խնձորենու կանաչ ծիլը միասին այրել և ծուխը փչել փեթակի մեջ [2, էջ 191]:

Խոտվում է նաև մեղվի մյուս վնասատուների (զամբուռ, մուկ), վտանգավոր խոտերի ու ծաղիկների (օշինդր, ճֆնի, խիարուկ, լեզեհամ ծաղիկ) մասին [2, էջ 191]:

Մեկ այլ գլխում ասվում է, որ մեղուններն ունեն իրենց թագավորը (մեղվամորը թագավոր են անվանել), ինչպես նաև՝ թագուհին: Այստեղ տրվում են լավ ու վատ մոր նշանները և նշվում, որ ամենալավը դեղին գույնի մայրն է. թեւ վստահած է, մեղուքն իրեանց թագաւոր ունին: Եւ թագուտ նշանք այս է. խարտէշ լինի, և մէկուկէս մեծ քան զայլ մեղու. և որ զայս նշանքս ունե-

նայ, լավն այն է» [2, էջ 191—192]: Գրքում խոսվում է նաև ուժեղ մեղվա-
րնտանիքի նշանների, ձագ վերցնելու ժամանակի մասին: Խորհուրդ է տրվում,
թե մեղրի հետ ի՞նչ ծաղիկներ և նյութեր պետք է խառնել ու քսել նոր մեղ-
վափեթակի ներսի պատերին, որպեսզի նոր վերցված ու այլ փեթակում տե-
ղադրված ձագը ետ չգնա իր նախկին բույնը: Այսպես՝ եթե մեղուն շար ու
կռվարար է, ուրեմն ուժեղ է, իսկ եթե փեթակից մոմի անուշ բուրմունք է գա-
լիս, ուրեմն մեղուն լավն է: Եթե ուզում ենք ձագ վերցնել, ապա անհրաժեշտ
է անուշահոտ, սպիտակ ծաղիկները (հոռոմ սնֆուլ), շաղախի մեղրով և քսել
փեթակի ներսը, որից հետո մեղուն բնավ չի հեռանա այդ փեթակից [2, էջ
191—192]:

«Գիրք Վաստակոցում» խորհուրդ է տրվում նաև, որ աշնանը և վաղ գար-
նանը, երբ մեղվաբնտանիքի կերը պակասում է, պետք է շամիչը ծեծել, օշա-
րակով (մեղրաջրով) շաղախել, քաղաքիկ (հացեր) պատրաստել ու դնել փե-
թակների մեջ, որ մեղունները սովից չկոտորվեն [2, էջ 192]:

Հաջորդ խորհուրդով առաջարկվում է վաղ գարնանը մեղվափեթակները
ձմեռանոցից հանելիս ծուխ տալ, մաքրել և մեղվաբնները լավ սրբել ամեն
տեսակ ադտից, ցեցից, սարդոստայնից, հանել ավելորդ պաններ (մոմահա-
ցերը), բունը խտացնել, որ ավելորդ մոմահացների պատճառով չսառի և բնում
հիվանդություն չառաջանա [2, էջ 192]:

Հերթական խորհուրդը որձ մեղվին (բուռին) ոչնչացնելու մասին է: Խոր-
հուրդ է տրվում բուռերին անհապաղ կոտորել, որովհետև նրանց կերակրվելու
պատճառով, փեթակում մեղր քիչ է մնում [2, էջ 192—193]:

Գրքում խոսվում է նաև մեղր քամելու ամենահարմար ժամանակի մա-
սին: Նշված է, թե քանի պանից (մեղրահացից) քանիսը պետք է թողնել մեղ-
վափեթակում և՛ քանիսը հանել, սովորեցվում է նաև մեղրահացեր կտրելու
(կթելու) ձևը. «Եւ զորդ կթելոյն ժամն՝ մայիս ամսոյ սկիզբն է, երբ նոր բազ-
մաստղն ելանէ. և զմիւս կթելն յաշնան սկիզբն պարտ է առնել ի խաչին
մուտն (սեպտեմբեր—Ա. Գ.). զերրորդ կիթն ի դեկտեմբերին: Եվ զորդն է որ
երեք հետ ի տարին կթեն զկոճակն» [2, էջ 123]: Ինչպես երևում է ասվա-
ծից, մեղրը հանում (կթում) են տարին երեք անգամ: Այդպես, իհարկե, վար-
վել են հեղինակի հայրենիքում և Հունաստանում և պարտադիր չէ, որ նույնու-
թյամբ և նույն ամսում անեն ամենուր: Յուրաքանչյուր երկրի բնակչի մայական
պայմաններից ելնելով, կարող է ժամանակամիջոցի որոշ տեղաշարժ լինել:
Առաջարկում է նաև մեղվափեթակից շատ մեղրահաց չհանել, որ մեղուն
«չխռովի»: Գարնանը և ամռանը կարելի է շատ հանել, իսկ աշնանը՝ երկու
բաժինը հանել, մեկը թողնել ձմեռվա պաշարի համար, որ մեղվաբնտանիքը
կարողանա առանց կորստի հասնել գարնան: Այստեղ «Գիրք Վաստակոցի»
հեղինակը սովորեցնում է, թե ի՞նչ դեղեր օգտագործել, ինչով օժանվել, որ
մեղրահացերը կտրելիս մեղուն չխաթի մեղվաուպահին: Այսպես, մեղր քա-
մողը (կթողը) պետք է տողտի ջրով շաղախած կավով օժի մարմնի բաց մա-
սերը, կամ էլ՝ հացահամեմի հունդը բովել, աղալ, ալյուր դարձնել, շաղախել
աղաջրով և հումեակաճն (հոռոմ) ձեթով, շաղախել մեղրի թանձրությամբ
ու դրանով օժել մարմնի բաց տեղերը: Առաջարկված դեղամիջոցները մեղ-
վաբնի վրա փշելու դեպքում նա մեղուն չի խաթում [2, էջ 193, 196—197]:

Սովորեցվում է նաև լեռներում մեղվի բույն և մեղր գտնելու կարգը:
Այսպես, եթե որեւէ տեղ մեղրով լիքը աման դրվի, ապա, քիչ անց, դրա վրա

կհավաքվեն մեղուներ, որոնք մեղրը վերցնելով, կթռչեն իրենց բույնը և մարդիկ մեղուներին հետևելով կգտնեն նրանց տեղը:

Գրքում նշված է օղնի-օթիի (թրնջխոտի—Ա. Գ.) միջոցով մեղուներին հավաքելու կարգի մասին: Ասում է նաև, որ մեղուն մեղվափեթակից դուրս է հանում և թափում մեռած մեղուներին [2, էջ 195]:

«Դուռն» ՄՂԱ (291) «Վասն մեղրի» գլխում, հեղինակը հայտնում է, թե որտեղի մեղրն է ավելի լավ և բացատրում, թե որո՞նք են լավ մեղրի նշանները: Նրա կարծիքով, ամենալավը Աթենքի և Սիցիլիա, Կրետե, Ֆուկ կղզիներից ստացված մեղրն է, որը «Իստակ, թափանցիկ ու խարտյաշ է»: Ինչպես երևում է, նա միայն այդ վայրերի մեղրին է ծանոթ եղել [2, էջ 196]:

Տասնյակ տարիների տարբեր վայրերի մեր շրջագայությունն ու այդ տեղերի մեղրերի և զանազան գրականության հետ ծանոթությունը մեզ բերել է այն համոզման, որ լավ մեղր հասկացությունը հարաբերական է: Մեղրի որակը կախված է տեղի բնակլիմայական պայմաններից՝ անձրևից ու արևից, ծաղիկների տեսակներից (ալպյան, անտառային, դաշտային, քարոտի) և այլն: Տարբեր տեղերի մեղրերն ունեն տարբեր հատկություններ և տարբեր ձևով էլ ազդում են մարդու օրգանների վրա: Մեղրը պետք է լինի մաքուր և ոսկեգույն, անուշահոտ և անուշահամ, մատներով տրորելիս բյուրեղները անմիջապես պետք է հալվեն, ամանից դատարկելիս չպետք է փտվի, այլ ուշ իջնի: Դեռ ավելին՝ թափվելիս պետք է կուտակվի մանր ծալքերով և ոչ թե ուղիղ ծակի ու իջնի խորքը: Մեղրը որքան հնանա, այնքան պետք է պնդանա—բյուրեղանա: Այս բոլորը փորձված և ստուգված են մեր պրակտիկայում:

Հաջորդ խրատը վերաբերվում է մեղրի բուժիչ հատկություններին: Հեղինակը խորհուրդ է տալիս հնարավորին չափ շատ մեղր օգտագործել. նշելով, որ նա, ով պարբերաբար մաքուր մեղր ուտի, երկար կապրի: Այս առումով վկայակոչում է Դեմոկրատես Իմաստասերին, որի կարծիքով երկար ապրելու համար պետք է սովորություն դարձնել ձաշից հետո հացով մեղր ուտելը: Ապա ավելացնում է, ով մարմինը միշտ օժի անուշահոտ յուղերով, իսկ ներսը՝ անուշ մեղրով, նա երկար կապրի և չի հիվանդանա [2, էջ 196]:

«Դուռն» ԺՂԳ (193) «Վասն որ մեղրաջուր շինես» գլխում հեղինակը սովորեցնում է, թե ինչպես պատրաստել մեղրաջուր և ինչպես օգտագործել այն որպես զովացուցիչ ըմպելիք և բուժամիջոց: Հիվանդ ստամոքսի համար առաջարկում է՝ «Առ մեղր ի փոփրէն յիստակած լիտր, մի, և սպրկիկ դամոն թազէ կամ չոր ի կտէն սրբած նուկի չորս, և անձրևի ջուր լիտր քսան, յիրեար խառնեա, և եփեա որ յերեքէն մէկն գնայ. և պարզեա և պահեա. և յետ երեք աւուր ի բան տար» [2, էջ 112—113]:

ՄԴ (204) գլխում առաջարկվում է մեղրով ու սերկեկիով գինի պատրաստելու եղանակը, որը միաժամանակ շատ լավ խմիչք է ստամոքսացավերը հանգստացնելու համար: Խորհուրդ է տրվում ջոկել լավ հասած և առողջ սերկեկի, պահել երկու շաբաթ մինչև թոռմելը, մաքրել վրայի փոշին, սերկեկիը կտրել ու բաժանել չորս մասի և միջի կտերը հանել: Մաքրած սերկեկիը և մեղրը լցնել նոր ձյութած ամանի մեջ՝ մեկ բաժին մեղր, երկուս ու կես բաժին սերկեկի: Ամանը փակել ու ծեփել, թողնել այդպես մեկ ամիս: Հետո բացել, հյութը քամել ու լցնել նման մեկ այլ ամանի մեջ: Ապա այդ լուծույթի մեկ բաժինը բացել երկուս ու կես բաժին ջրով, լավ խառնել. նորից քամել

ու լցնել մեկ ուրիշ ամանի մեջ, բերանը ձյութով փակել, դնել արևի տակ մեկ ամիս որ եփվի, որից հետո միայն խմել [2, էջ 126]:

«Գիրք Վաստակոցի» ՃԻՆ (127) գլխում առաջարկվում է ամանները ներսի կողմից պատելու համար մոմի խառնուրդով հատուկ ձյութ պատրաստելու եղանակ: Այն է՝ իրար խառնել երեսուն լիտր ձյութ, մեկ լիտր մոմ, ութ նուկի նաշադիր, շորս նուկի քուշնայի ալյուր, եփել, օծել ամանի ներսը [2, էջ 90]:

«Դուռն» ԹԲ (302)-ում առաջարկվում է մեղրի միջոցով անասունների աչքերի վրայի սպիտակն անցկացնելու դեղ պատրաստելու ձև: Այսպես՝ թարմ աղը մանր աղալ, մաղել, խառնել մեղրի ու կարագի հետ լավ շաղախել և դնել անասունների աչքին [2, էջ 206]:

Մեղրից դեղ կարելի է պատրաստել նաև տնային մկներին ոչնչացնելու համար: «Դուռն» ԺԹ-ում (109) կարդում ենք՝ վերցնել սև խարբախ (վրացի կոճ), աղալ, խառնել ալյուրին և ճմլած պանրին, շաղախել մեղրաջրով և թողնել, որ մկներն ուտեն, որոշ ժամանակ անց կսատկեն [2, էջ 31]:

«Գիրք Վաստակոցը» արժեքավոր է ոչ միայն այն առումով, որ մեղու պահելու մասին լավագույն խորհուրդ-խրատներ է ուսուցանում, այլև առաջարկում է մադուկանց ու անասունների զանազան հիվանդությունների բուժման դեղատոմսեր, որոնց բաղադրության մեջ անպայման կան մեղր և մոմ, ինչպես նաև սովորեցնում է մեղրի խառնուրդով բուժիչ խմիչքներ և զովացուցիչ ջրեր պատրաստելու եղանակները, մոմի օգնությամբ ամանների ներսը պատելու, քսուկներ պատրաստելու ձևեր և այլն:

Հայկական ՍՍՀ ԳԱ հնագիտության

և ազգագրության ինստիտուտ

Ստացված է 4.VI.1975թ.

А. О. ГАСПАРЯН

«КНИГА ЗАСЛУГ» О ПЧЕЛОВОДСТВЕ

Резюме

«Книга заслуг», дошедшая до нас из раннего средневековья в переводе на армянский язык, содержит разнородные сведения, относящиеся к хозяйственным занятиям, в том числе и к пчеловодству.

Здесь, в частности, говорится об уходе за пчелами, их размножении, лечении, выборе видов пчел и улучшении состава пчелиных ульев; рекомендуется ряд примечательных рецептов, состоящих из меда, воска и других продуктов для лечения разных болезней.

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Արամիամյան Ա. Գ. Օգերևութաբանական մի քանի րնագրեր, «Հայագիտական հետազոտություններ» Ա., Երևան, 1974:

2. Գիրք Վաստակոց. Թարգմանություն նախնեաց յարաբացի լեզուէ, Վենետիկ, 1877: